

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ո Վ

1) Նիստի անցկացման վայրը, տարին, ամիսը և ամսաթիվը, նիստը սկսելու և ավարտելու ժամերը՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն /հասցե՝ Վ. Սարգսյան 3/, 2024 թ. մայիսի 3՝ ժամը 15⁰⁰-17⁰⁰:

2) Նիստի օրակարգը՝

1. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի ժաննա Անդերասանի ողջույնի խոսք
2. Քննարկումներ՝ կրթության ոլորտում ներդրված հիմնարար փոփոխություններին և ոլորտի բարելավմանն ուղղված մի շարք ծրագրերի վերաբերյալ /զեկուցող՝ ԿԳՄՍ նախարար ժաննա Անդրեասյան/
3. Նիստի մասնակիցների ներկայացրած հարցերի և առաջարկների շուրջ քննարկում

3) Նիստին մասնակցող խորհրդի անդամների, հրավիրված անձանց տվյալները՝

Նախարարին կից աշակերտական խորհրդի 22 անդամից նիստին մասնակցել է 19-ը: Հանդիպմանը ներկա են եղել նաև Հանրակրթության վարչության պետ Թամարա Սարգսյանը, Հանրակրթության և արտադպրոցական ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ Սուսաննա Ազատյանը, շահագրգիռ կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ:

4) Քննարկվող հարցերի և ելույթների հիմնական դրույթները.

ՀՀ ԿԳՄՍ նախարարին կից աշակերտական խորհուրդը գումարել է այս տարվա իր անդրանիկ նիստը, որի ընթացքում քննարկվել են կրթության ոլորտում ներդրված հիմնարար փոփոխություններին և ոլորտի բարելավմանն ուղղված մի շարք ծրագրեր: Նիստին մասնակցել են խորհրդում ներգրավված ՀՀ մարզերի և Երևանի հիմնական, միջնակարգ և ավագ դպրոցների բարձր դասարանների աշակերտներ:

Նիստը վարել է ԿԳՄՍ նախարար ժաննա Անդրեասյանը: Ողջունելով մասնակիցներին՝ նախարարը կարևորել է աշակերտական խորհրդի հանդիպումները, որոնց ընթացքում, ըստ ժաննա Անդրեասյանի, հնարավորություն է ընձեռվում մանրամասն խոսելու կրթական այն բոլոր բարեփոխումների մասին, որոնց առաջին շահառուները հենց աշակերտներն են:

«Ներկայում կրթության ոլորտի բոլոր մակարդակներում տեղի են ունենում ամենատարբեր փոփոխություններ, և այսօրվա մեր դպրոցականներն են այդ բարեփոխումների իրական շահառուները, քանի որ իրականացվող ծրագրերը երկարաժամկետ են: Մեզ համար կարևոր է, որ որպես աշակերտական խորհրդի անդամներ՝ դուք իրազեկ լինեք ԿԳՄՍ նախարարության կողմից իրականացվող աշխատանքների մասին, հանդես գաք առաջարկություններով, ինչպես նաև դառնաք այն օղակը, որը հավաստի տեղեկություններ կունենա ընթացիկ բարեփոխումների վերաբերյալ և դրանք կներկայացնի դպրոցում, ինչու չէ նաև ձեր իսկ միջավայրում», - նշել է Ժաննա Անդրեասյանը՝ հույս հայտնելով, որ աշակերտները խորհրդի նիստերի ընթացքում կլինեն ակտիվ, կբարձրաձայնեն դպրոցի ներսում առկա խնդիրները, կներկայացնեն իրենց տեսակետները, ինչպես նաև կառաջարկեն լուծման տարբերակներ:

5) Նիստին մասնակցող խորհրդի անդամների ներկայացրած հանրային առաջարկները, դիտողությունները և դրանց վերաբերյալ պաշտոնական մեկնաբանությունները.

Խորհրդի անդամները շնորհակալություն են հայտնել ԿԳՄՍ նախարարին՝ ոլորտում իրականացվող բարեփոխումներն իրենց հետ քննարկելու, ինչպես նաև աշակերտների կարծիքները և առաջարկությունները հաշվի առնելու համար:

Խորհրդի անդամները տարաբնույթ հարցեր են ուղղել Ժաննա Անդրեասյանին, որոնք, մասնավորապես, վերաբերել են դպրոցներում մասնագիտական կողմնորոշման, օտար լեզուների և շրջակա միջավայրի պահպանության խմբակների գործունեության ընդլայնմանը, դպրոցների և ՀԿ-ների կապին, կրեդիտային համակարգի ներդրմանը, կրթական աստիճանի ավարտին իրականացվող գիտելիքի ստուգմանը, պետական ավարտական քննությունների անցկացմանը, կիսամյակի ընթացքում 60 ժամից ավելի բացակայության խնդրին, ինչպես նաև ուսուցիչների կամավոր ատեստավորմանը, գյուղական դպրոցներում ուսուցիչների թափուր տեղերի համալրմանը և այլն:

Նախարարը մանրամասն անդրադարձել է բարձրացված բոլոր հարցերին և խնդիրներին՝ շեշտելով, որ դրանց մեծ մասի պատասխաններն ու լուծումները տրվում են դպրոցներում նոր չափորոշի ներդրմամբ և իրագործմամբ:

«Ինչքան էլ փորձենք ակտիվ համագործակցություն ձևավորել ՀԿ-ների, այլ կազմակերպությունների, կառույցների և դպրոցների միջև, այնուամենայնիվ, պետք է հասնել այն գիտակցմանը, որ բոլոր բնակավայրերի դպրոցների մեր երեխաները մտածեն՝ այն, ինչ ցանկանում են, կարող են իրագործել: Ինչն է ձեզ խանգարում ինքնուրույն խումբ ձևավորելու, զանգելու, նամակ գրելու, պայմանավորվածություն ձեռք բերելու, հետադարձ կապ ապահովելու համար: Սրանք հաղորդակցման այն կարևոր հմտություններն և կարողություններն են, որոնք կյանքի տարբեր

իրավիճակներում անհրաժեշտ են մեզինց յուրաքանչյուրին», - նշել է ժաննա Անդրեասյանը և հորդորել աշակերտներին լինել առավել ակտիվ, նախաձեռնող ու նպատակասլաց:


Անդրադառնալով ուսուցիչների կամավոր ատեստավորման և գյուղական դպրոցներում մասնագետների պակասի վերաբերյալ հարցերին՝ նախարարը նշել է, որ պետությունը տարբեր գործընթացներով և բարեփոխումներով փորձում հասնել է կրթության որակի բարելավմանը և զարգացմանը. «Կամավոր ատեստավորումը, բացի աշխատավարձերի բարձրացումից, առաջին հերթին խթանում է ուսուցիչների մասնագիտական զարգացումը: Այս սեպտեմբերից մենք նաև խրախուսման մի շարք նոր մեխանիզմներ ենք ներդրել: ՀՀ պետական հանրակրթական բոլոր ուսումնական հաստատություններում ԲՏՃՄ ոլորտի (բացառությամբ՝ մաթեմատիկական առարկաների) դասավանդող ուսուցիչներին տրվում է լրավճար՝ դրույքաչափի 25 տոկոսի չափով»:


Ժաննա Անդրեասյանը նշել է, որ գյուղական համայնքների դպրոցներում մասնագետների պակասը լրացնելու նպատակով գործում է նաև սահմանամերձ կամ բարձրլեռնային բնակավայրերի պետական ուսումնական հաստատություններ մասնագետների գործուղման կարգը, ըստ որի՝ տրվում են սոցիալական մի շարք երաշխիքներ այդ դպրոցներ գործուղվող ուսուցիչներին: Բացի այդ՝ սեպտեմբերից հավելավճար է հատկացվում նաև մինչև 100 աշակերտ ունեցող դպրոցներում աշխատող այն ուսուցիչների համար, որոնք աշխատում են ոչ ամբողջական դրույքով: Հաշվի առնելով, որ այդ դպրոցներում ուսուցիչները օբյեկտիվ պատճառներով 1 դրույք ծանրաբեռնվածություն չեն ունենում, նման ուսուցիչներին հավելավճար է տրամադրվում, որպեսզի պետությունը նպաստի թափուր հաստիքների համալրմանը և դասավանդման որակի բարելավմանը:

Պատասխանելով բուհական ընդունելության գործող կարգի վերանայման վերաբերյալ հարցին՝ ԿԳՄՍ նախարարն ասել է. «Տավուշի մարզում 2021-22 ուստարվանից փորձարկվում է Հանրակրթության նոր չափորոշիչը, և այս տարի արդեն ավարտում են այդ չափորոշիչով ուսումնառած առաջին շրջանավարտները: Նրանց համար սահմանել ենք բուհեր ընդունելության նոր հնարավորություններ: Ըստ այդմ՝ ուսումնառության ավարտին դպրոցի ավարտական քննությունները կհանդիսանան նաև բուհի համար ընդունելության քննություններ: Այս գործընթացը դեռևս փորձարկման փուլում է, և հույս ունենք, որ 2026-ից այս համակարգն արդեն կգործի բոլոր շրջանավարտների համար»:

Ամփոփելով նիստը՝ նախարար ժաննա Անդրեասյանը շնորհակալություն է հայտնել արդյունավետ և շահագրգիռ քննարկման համար՝ վստահեցնելով, որ հնչած բովանդակային և օգտակար առաջարկները, ըստ անհրաժեշտության, կքննարկվեն և կներառվեն ընթացող բարեփոխումների գործընթացում:

Հանդիպմանը ներկա են եղել նաև շահագրգիռ կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, որոնք իրենց պատրաստակամությունն ու աջակցությունն են հայտնել՝ օգնելու աշակերտներին մասնագիտական կողմնորոշման, նոր հմտությունների ու կարողությունների ձեռք բերման և այլ հարցերում:

Նիստի նախագահող՝  ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի ժաննա Անդրեասյան

Արձանագրող՝  ԿԳՄՍՆ հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչության գլխավոր մասնագետ Գրետա Գրիգորյան